Ծովինար Անդրանիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-26 11:34:53

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026թ. նոյեմբերի 13-ին, ժամը 13:00-ին Ծովինար Անդրանիկի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք.երևան, Արշակունյաց պողոտա 5 շենք թիվ 109 սենյակ հացեում կանցկացվի Ծովինար Անդրանիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի աճուրդը՝ 1 ԼՈՏ-ով, համապատասխան 4 ենթալոտերով Գույքերն իրենցից ներկայացնում են՝
ԼՈՏ 1
ենթալոտ 1. Շղթա և 1 հատ խաչ , իրի զանգվածը 17.4 գրամ է, իրում ոսկու մաքուր զանգվածը 16,4 գրամ է, հարգը 500, որի մեկնարկային գինը կազմում է 416.265 ՀՀ դրամ:
ենթալոտ 2. խաչ 2 հատ, իրի զանգվածը 4.3 գրամ է, իրում ոսկու մաքուր զանգվածը 4,0 գրամ է,հարգը 580, որի մեկնարկային գինը կազմում է 117.600 ՀՀ դրամ:
ենթալոտ 3. թևնոց 1 հատ , իրի զանգվածը 1.1 գրամ է, իրում ոսկու մաքուր զանգվածը 0,90 գրամ է,հարգը 580,որի մեկնարկային գինը կազմում է 26.460 ՀՀ դրամ:
ենթալոտ 4. ամուսնական մատանի 1 հատ, իրի զանգվածը 7.8 գրամ է, իրում ոսկու մաքուր զանգվածը 7,50 գրամ է, հարգը 958, որի մեկնարկային գինը կազմում է 364.560 ՀՀ դրամ:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 300,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Ծովինար Անդրանիկի Գրիգորյանի անվամբ Արդշինբանկ ԲԲԸ-ում բացված թիվ 2480502286960003 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան (ք.Երևան, Օտյան 53/2):
Հայտում պետք է նշվեն պարտապանի անավանումը (անունը ազգանունը, անցկացման օրը, ամիսը, թարեթիվ, կառավարչի անուն ազգանունը, հայտատուի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավաբանական անձ լինելու դեպքում իրավաբանական այնձի անվանումը (նրա անունից հանդես եկող անձի՝ անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները, լիազորված լինելու դեպքում՝ լիազորված լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը) :
Հայտին պետք է կցված լինեն մասնակցության վճարը և նախավճարը վճարված լինելու վերաբերյալ անդորրագրերը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, լիազորված լինելու դեպքում լիազորագիրը:
Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Աճուրդի անցկացման կարգը սահմանում է ՀՀ Արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ N 116-Ն հրամանով:
Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին (094 411 487):

37494411487
a.eloyan@mail.ru
ք. Երևան, Նոր-Արեշ 40 փողոց, 37 տուն